Ի պատասխան ազգընտիր Ս. Տեղակալի կոչերի, հայ ժողովուրդն արձագանգում է իր հայրենասիրական բուռն զգացմունքներով և իր պատրաստակամությունը հայտնում՝ բոլոր ուժերով օգնելու փառապանծ Կարմիր Բանակին վերջնական հաղթանակ տանելու համար *):

ՆՅՈՒ-ՅՈՐՔ—ԷՋՄԻԱԾԻՆ.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՁԵՌՐԵՔՁՅԱՆԻՆ

Մեծ գոհունակությամբ հաղորդում ենք Ձեզ, որ Ամերիկայում ապրող հայերին ուղղած Ձեր կոչը լայն արձագանք գտավ: Մարտի 7-ին Նյու-Յորքում կայացավ այստեղ ապրող հայության բոլոր տարրերի մեծ միտինգ, որտեղ ընտրվեց կոմիտե՝ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կառուցման ֆոնդի օգտին միջոցներ հավաքելու համար:

Մենք ողջունում ենք Ձեր հայրենասիրական կոչը Կարմիր Բանակին օգնելու գործում, մենք հանձն ենք առնում ամբողջովին օժանդակել այդ ձեռնարկմանը, մասսայականացնել ու տարածել Ձեր կոչը և ապահովել միջոցների հավաքման հաջողությունը ու հավաքված միջոցներն անհապաղ ուղարկել Ձեզ:

Մենք հույս ունենք հավաքելու 150 հազար դոլլարից ավելի:

Սպասում ենք Ձեր օրհնությանն ու կոնդակին:

Գործադիր կոմիտեի նախագահ՝ պրոֆ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԴԱԴՈՒՐՅԱՆ,
Գանձապահ պրոֆ.՝ ՏԻԳՐԱՆ ԿԱՐԻԿՅԱՆ,
Փոխնախագահ՝ Հայր արժանապատիվ՝ ՄԻԼԱՆ ԿԱՊԱՅԱՆ,
Քարտուղար՝ ՕԳՍԵՆ ՍԱՐՅԱՆ (պրոգրեսիվ լիգայի քարտուղար),
Բանաստեղծ՝ ԿԱՐԱՊԵՏ ՍԵԴԱԼ
«Լրաբեր»-ի խմբագիր՝ ՊԱՏՐԻԿ ՍԵԼՅԱՆ:
ՀԱՅԿԱԶ ԳՈՒՐԳԵՆՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ՋԱՎՅԱՆ, ԱՐԱՄ ՁԱՐԳԱՐՅԱՆ, ԲԺԻՇԿ ՄԻՀՐԱՆ ԵԿՁԵՐՅԱՆ, ԱՆԱՆՅԱ ՈՒԼԻԲԵԿՅԱՆ ԲԺ. ԲՈՂԴԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, ԱՐՇԱՎԻՐ ՇԱՄԻԼՅԱՆ, ՄԻՀՐԴԱՏ ՏԻՐԱԿՅԱՆ:

ԲՈՍՏՈՆ—ԷՋՄԻԱԾԻՆ, 6 VIII 1943 թ.

ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՁԵՌՐԵՔՁՅԱՆԻՆ

Հայկական դեմոկրատական լիբերալ պարտիայի սույն թվի հուլիսին դումարված տարեկան ժողովը հայտնում և հավատում է իր սերն ու նվիրվածությունը Էջմիածնի Գերագույն Խորհրդին, անկեղծորեն իր շնորհակալությունն է հայտնում Ձերդ բարձր սրբազնությանը «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան կառուցմանը նախաձեռնելու համար:

Ամբողջ հոգով ողջունելով, մեր ժողովի բոլոր անդամներն իրենց շնորհավորանքներն են հղում Հայկական կառավարությանը և ժողովրդին, պարտավորվում են իրենց օգնությունը ցույց տալ ապահովելու համար Սովետական Հայաստանի հաղթանակը, որի դավակները հերոսաբար կռվում են թշնամի նացիստների դեմ մղվող ճակատամարտերում:

ՊԵՏՐՈՍ ՊԱՐԶՅԱՆ

---

*) Ստացված բազմաթիվ հեռագրերից սույն համարում զետեղում ենք միայն մի քանիսը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Հայտնում ենք մեր ամենասրտագին համակրանքը հայրենական պատերազմի առթիվ՝ աղատության և արդարության հաստատուն հուսով, և մեր անձնվիրությունը Մայր Աթոռին:

Հայոց ռազմանպաստ Միությունը արդեն իսկ հատկացրել է 47 հազար դոլլար Կարմիր Բանակի բժշկական օգնության համար:

Ունենք նաև Հայաստանի ժողովրդի օգնության գործին հատկացված գումարներ: Ուստի խնդրում ենք հաղորդել, թէ ինչ նյութեր կարող ենք ուղարկել:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՂԱԶԱՐՅԱՆ,
ՀԱՅ ՌԱԶՄԱՆՊԱՍՏ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՆՅՈՒ—ՅՈՐՔԻՑ—ԷՋՄԻԱԾԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ Տ. ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Հյուսիսային Ամերիկայի Հայոց Թեմական Պատգամավորական ժողովը հայտնում է յուր որդիական սերն ու երախտագիտությունը համայն Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Ժողովը խնդրում է Ձեզ հաղորդել մեր հիացմունքը ՍՏԱԼԻՆԻՆ, Միության խմաստուն առաջնորդին, որի անդուլ և արթուն ղեկավարության շնորհիվ Կարմիր Բանակը քաջության հրաշքներ է ցուցաբերում Հայրենիքի պաշտպանության գործում: Հայտնել նաև Սովետական Հայաստանի Ժողկոմսովետի նախագահին մեր նվիրվածությունն ու եղբայրական զգացմունքները և մեր պատրաստակամությունը ցույց տալու ամեն տեսակ օգնություն մեր նոր Հայաստանի անվտանգությունը ապահովելու համար:

ԵՂՐԱՑՐԱԿԱՆ ՈՂՋՈՒՅՆՆԵՐՈՎ՝
ԴԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ,
ԱՌԱՋՆՈՐԴ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԹԵՄԻ